

Ա. Ս. ԱՐԲՈՒՆՈՎՅԱՆ, ԱՐԱԵՆ ԱՅԵՐԵՅԱՆԻ լեզվաբանական հայացքները,
2002 ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 216 էջ:

Արդի սովետական լեզվաբանությունը զարգանում է ուսումնասիրության առարկայի խոր վերլուծության և տեսական լայն ընդհանրացման ուղիով: Դա նկատվում է հայերենի կառուցվածքի, նրա առանձին տարրերակների ինքնակա քննությանը, համեմատական և զուգադրական հետազոտմանը, հայոց լեզվի և հայ լեզվաբանության պատմությանը նվիրված աշխատություններում:

Անցյալ դարի խոշոր գիտնական Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքների ամբողջական ուսումնասիրությանն է նվիրված Ա. Աբրահամյանի «Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները մենագրությունը: Այն բաղկացած է ներածությունից և շուրս զլխից, որոնցում, նախ, հեղինակն անդրադառնում է՝ Ա. Այտընյանի կյանքին և գիտական գործունեությանը, նրան նվիրված բանասիրական և հրապարակային հոդվածներին, այնուհետև՝ մեծ գիտնականի լեզվաբանական հայացքներին վերաբերող նախորդ հետազոտությունները զննատեսությամբ հետո, ընդհանուր լեզվաբանական ուշադրության առարկա են դառնում լեզվի, ըստ որում հայոց լեզվի զարգացման, հասարակական— ոճական տարբերակվածության, գրական լեզվի ընտրության և մշակման հարցերը: Վերջիններս ըստ էության կազմում են Այտընյանի հայացքների ամբողջությունը: Այդ հարցերը քննվում են ամենայն մանրամասնությամբ, զննատվում լայն ընդհանրացմամբ:

Այտընյանի լեզվաբանական հայացքները գերազանցում են ժամանակի ընդհանուր մակարդակը, հաճախ կանխում հետագա զբնականներին: Դա բացատրվում է նրա գիտական ուղեգրությունների, լեզվի պատմության ուսումնասիրության ելակետերի ինքնատիպությամբ: Այդ հայացքները նպաստավոր դեր են խաղացել հայերենի պատմական հետազոտության, նրա կառուցվածքի այս կամ այն կողմի վերլուծության, գրական տարբերակների, գրական լեզվի և ժամանակի բարբառների փոխհարաբերության բացահայտման խնդիրների մեջ: Այս տեսակետից խրախուսելի է, երբ Ա. Աբրահամյանը ամենից առաջ անդրադառնում է Այտընյանի գիտական—լեզվաբանական ելակետային այն սկզբունքներին, որոնք խիստ արդիական են, նույնիսկ՝ ուղենշային:

Քննության առարկա գրեթե յուրաքանչյուր հարց Ա. Աբրահամյանը վերլուծում է սխտեմատիկաբար: Ուշադրություն է դարձվում հանգուցային այն կետերին, որոնցով ձգվում է հարցերի ողջ շրջանակը՝ ընդգրկման խորությամբ և ձևակերպման հստակությամբ: Այտընյանի համապատասխան սկզբունքները և գաղափարները այստեղ մեկնաբանվում են ինքնին և հնարավոր նախադրյալների հետ ունեցած կապի մեջ:

Հայոց լեզվի զարգացման պատմությանը վերաբերող կոնկրետ հարցերը արծարծվում են հիմնադրույթների ձևով, որոնց տեսական վերլուծությունը հազնում է փաստական հիմնավորումներով: Այտընյանի հայացքների քննության նման մոտեցումը Ա. Աբրահամյանի ուսումնասիրության «ռեզիս» է: Ըստ այդմ, հնարավորություն է ստեղծվում բացահայտելու Այտընյանի քննադատականը այնպիսի հիմնահարցերի վերաբերյալ, ինչպիսին են տեսականի և գործնականի կապը, գիտական ճանաչողության առարկայականության չափանիշը, անհրաժեշտ է դառնում ի հայտ բերելու լեզվի և տրամաբանության, հոգեբանության, լեզվի և այն կրող ժողովրդի պատմության փոխադարձ կապն ու փոխազդեցությունը:

Հին գրական հայերենի և գրական աշխարհագրի փոխհարաբերության Այտընյանի զննահատությունն այստեղ քննվում է միանգամայն առարկայական մոտեցումով, անկողմնակալ վերլուծությամբ և տեսական նոր ընդհանրացումով: Դա վերաբերում է հին և նոր տարբերակների շուրջ եղած պատկերացումներին, դրանց գոյակցական շփումներին՝ առնված տարածամասնակային, տարածքային և գեղագիտական տարբերակվածության, հաղորդակցական կենսունակության, գրական նորմայի տեսակետից ի հայտ եկող լիարժեքության և դրանց հետագա առնչակցության չափանիշների հարաբերությամբ: Այտընյանն իր աշխատությունը գրել է հին գրական հայերենի և գրական աշխարհագրի միջև շարունակվող պայքարի, աշխարհագրորդ նոր գրական լեզու

հույսակելու համար ցուցաբերվող արտաքին միջամտության՝ «գրապայքարի» այն շրջանում, երբ նոր հայերենը նվաճում էր միահեծան դրական լեզու դառնալու իրավունքը: Ըստ այդմ, Այտընյանը լայնությամբ և խորությամբ քննում է հայոց լեզվի պատմությունը՝ արժեքավորելով նրա գրական-տարբերակները, զնահատելով դրանց խոսակցական հիմքերը: Գրախոսվող աշխատությունը աչքի է ընկնում ժամանակաշրջանի ճիշտ ընկալման և Այտընյանի նման վերաբերմունքի իրական զնահատման կողմնորոշմամբ:

Նոր շրջանի գրարարը արժարժվում է Այտընյանի քննարկած հարցերի գրեթե բոլոր կարգի զնահատություններում: Այն մասնավոր քննության է առնվում «գրական լեզվի ընտրության», ընդամից աշխարհարարի հետ նրա համեմատության, և «աշխարհարարի մշակման ուղիների» վերաբերյալ Այտընյանի ունեցած հայացքներին անդրադառնալիս: Գրաբարը և գրական աշխարհարարը դիտվում են «մրցակից» տարրերակներ, Գրաբարը նպաստում է գրական աշխարհարարի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը: Գրական աշխարհարարի մշակման այն ուղիները, որ պատմականորեն հիմնավորում է տեսականորեն կանխագծում է Այտընյանը, ինչ որ չափով առնչվում են գրաբարի հնարավորությունների օգտագործման խնդրին: Ա. Աբրահամյանը իրավամբ գտնում է, որ գրաբարի և գրական աշխարհարարի փոխհարաբերության զնահատության հարցում Այտընյանի ելակետն ու նպատակակետը եղել է միասնության ձգտումը: Ա. Աբրահամյանը ճիշտ է զնահատում Այտընյանի այն ըմբռնումը, ըստ որի աշխարհարարի միասնական մշակման գործում նշանակալից դեր ունեն ներքին՝ գրաբարյան փոխառությունները, որոնց հարցում ևս պետք է առաջնորդվել «ժամանակի և ընտրող ճաշակի» չափանիշներով: Իր «Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությունը գրած լինելով նոր շրջանի գրարարի և գրական աշխարհարարի միջև տեղի ունեցած «գրապայքարի» բուռն ժամանակներում, հետապնդելով վերջինիս հետ կապված հարցերին տեսական լուծում տալու նպատակ, Այտընյանը ոչ միայն բարձր է զնահատում գրական աշխարհարարը, այլև չի նսեմացնում գրաբարի գերը՝ գտնելով, որ նոր գրական հայերենի մշակման և կանոնավորման գործում վճռական, նշանակալից է գրաբարի դերը: Նոր գրական հայերենը, ինչպես գիտենք, զարգացավ այդ ուղիով, և այսօր ևս զգալի է այդ միտումը: Ա. Աբրահամյանը հատուկ ուշադրություն է դարձնում Հայ հարցին և այն զնահատում որոշակի վերաբերմունքով:

Վերը նշեցինք, որ Այտընյանի տեսական հայացքների քննությանն անդրադառնալիս ըստ հնարավորին շանքեր են գործադրվում այդ հայացքները մեկնաբանել հնարավոր նախադրյալների հետ ունեցած կապի մեջ: Նման մոտեցումը, ինչ խոսք, մշակութարանության տեսակետից հետաքրքրական է, սակայն ոչ այնքան խրախուսելի: Ամբողջ հարցն այն է, որ լեզվի և մտածողության հարցերի շուրջ տարբեր ժամանակներում կուտակված դիտելիքները ոչ միայն փոխանցվում են ավանդաբար, այլև կրում են ընդհանրական բնույթ:

«Արսեն Այտընյանի լեզվաբանական հայացքները» դիրքը երիտասարդ գիտնական Ա. Աբրահամյանի հետազոտության եռանդուն պրպտումների արդյունքն է:

ՎԱՋԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բաճաթի՝ Գիտությունների քեկեմոն: